**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**
**N ԳՀԱՊՁԲ-9/7-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 28 -ը սեպտեմբերի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Մի ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Լ. Գրիգորյանցի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով **08.02.2018թ.** կնքված № ԳՀԱՊՁԲ-**9/7-6** գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Հաշվի առնելով պայմանագրում առկա տեխնիկական վրիպակները և Վաճառողի գրավոր դիմումը՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրում կատարել փոփոխություն և Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրի *«անվանում»* դաշտում կատարել շտկում՝ **«Սպինալ անզգայացման ասեղ ինտրադյուսերով 29G 99մմ PAJUNK»** փոխարեն սահմանել **«Սպինալ անզգայացման ասեղ ինտրադյուսերով 29G 90մմ PAJUNK»** և **«Էնդոտրախեալ փողի ֆիքսատոր չափահասի VBM REF:40-0010-044»** փոխարեն սահմանել **«Էնդոտրախեալ փողի ֆիքսատոր չափահասի VBM REF:40-8010-044»:**

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **ք. Երևան, Րաֆֆու 99/42** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«Ամերիաբանկ» ՓԲԸ** |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1570021916560100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01847238 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆՑ |